

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

Ռեմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 31.10.2018թ. նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի իրականացման գործընթացի քննարկում /զեկուցող Ա.Չուբարյան/:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի 36 անդամներից 22-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Մրցույթային հանձնաժողովի նախագահ Ա.Չուբարյանը, ամփոփելով 2017-18 ուս.տարում որակավորման բարձրացման դասընթացներին ֆակուլտետի դասախոսների մասնակցությունը, նշեց, որ ընթացիկ տարում *Մասնագիտության արդի հիմնախնդիրներ* դասընթացին մասնակցել են ֆակուլտետի դասախոսների 25%-ը: Ֆրանսիական բանասիրության և Գերմանական բանասիրության ամբիոնները դեռևս չեն կազմակերպել սույն դասընթացը, սակայն ամբիոնի վարիչների հավաստիացմամբ այն կանցկացվի ընթացիկ ուսումնական տարում: Նշվեց, որ ծրագրի բոլոր մասնակիցները անգլերենի իրենց իմացությունը պետք է բարձրացնեն առնվազն մեկ մակարդակով: Զեկուցողը կրկին անդրադարձավ այն փոփոխություններին, որոնք տեղ են գտել ընթացիկ հնգամյակի համար նախատեսված որակավորման բարձրացման ծրագրում, հատկապես պարտադիր դասընթացների և գիտահետազոտահական կրթամասի կտրվածքով, և պատասխանեց գիտխորհրդի անդամներին հետաքրքրող հարցերին: Զեկուցողն ավելացրեց, որ ընդհանուր առմամբ գործընթացը ֆակուլտետում նորմալ է ընթանում, այնուամենայնիվ պետք է ակտիվացնել հատկապես ոչ մի կրեդիտ չունեցող դասախոսների մասնակցությունը դասընթացներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ներկայացված տվյալներն ընդունելի գիտություն:

2. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ՝

Ձ. Հարությունյանը արտահայտեց իր նկատառումները Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից գիտական ղեկավարին և ասպիրանտին առաջադրվող պահանջների առնչությամբ: Մասնավորապես նա նշեց, որ գիտության որակը բովանդակության մեջ է, ոչ թե հոդվածների քանակի, և ճիշտ չի համարում այն մեխանիկական մոտեցումը, որ գործել է մինչև այժմ: Ձ.Հարությունյանը հույս հայտնեց, որ ԲՈԿ-ի նորընտիր նախագահը կանդրադառնա այդ խնդրի լուծմանը և կիրականացնի որոշակի փոփոխություններ ուղղված իսկապես որակի բարձրացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- Միջնորդել և խնդրել ՀՀ ԲՈԿ-ին Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, դոցենտ, մ.գ.թ. Ջավեն Հարությունյանին տալ ամբիոնի ասպիրանտ Նելլի Այվազյանի «Հույզերի լեզվական դրսևորումները քաղաքական խոսույթում /ֆրանսերեն նյութի հիման վրա/» թեմայով թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարման իրավունք՝ Ժ.02.07 «Ռեոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ:
- Հաստատել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Լիլյա Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Անհամաձայնության լեզվաոճական և գործաբանական դրսևորումները ժամանակակից ֆրանսերենում» :
- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Ամալյա Արմենի Սողոմոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու էմիգրանտական գրականությունը /Նաբոկով, Հուսեինի/», Ժ.01.07 «Արտասահմանյան

գրականություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ. Անուշ Սեդրակյանին:

- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Ռիթա Զավենի Գասապեանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Մոդեռնիզմը և Վիլյամ Սարոյանի դրամատուրգիան» /գիտական ղեկավար, պրոֆ. Հենրիկ Էդոյան/, Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ:
- Տպագրության նրաշխավորել Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, դոցենտ, Բ.Գ.Թ. Հասմիկ Բաղդասարյանի և դասախոս Արմինե Դեյրմենջյանի *Հովհ. Թումանյանի հեքիաթների իսպաներեն թարգմանությունները* :
- Տպագրության նրաշխավորել Ռոմանական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ. Լ.Սարոյանի «*Իսպաներենի տեսական հնչյունաբանություն*» դասագիրքը:

Գիտլսորհրդի նախագահ՝

Ս.Ա. Աբրահամյան

Գիտլսորհրդի քարտուղար՝

Գ.Ն. Մուրադյան

31 հոկտեմբերի 2018թ.